398 Տեր, տո՛ւր ինձ այն հոգին,

1. Տեր, տո՛ւր ինձ այն հոգին,
Որով Հայր Աստծուն հնազանդվեցիր,
Տեր, տո՛ւր ինձ այն հոգին,
Որով դեպի խաչ Դու գնացիր:

Ես ինչպե՞ս անեմ, որ Քեզ նմանվեմ,
Ո՛վ Հիսուս Քրիստոս, իմ Տեր,
Սուրբ խոսքովդ մաքրի՛ր իմ հոգին,
Ամենակարող Տեր:

2. Տեր, տո՛ւր ինձ այն հոգին,
Որով հոգիներ Դու շահեցիր,
Տեր, տո՛ւր ինձ այն հոգին,
Որով աշխարհին Դու հաղթեցիր:

3. Տեր, տո՛ւր ինձ այն հոգին,
Որով մեղավորը սիրեցիր,
Տեր, տո՛ւր ինձ այն հոգին,
Որով մարդկությանը ներեցիր:

«Ուստի, ամեն ինչ, որ կամենում եք,
Թե ձեզ անեն մարդիկ,
Այնպես էլ դուք արեք նրանց,
Այնպես արեք նրանց»: